ՀԱՅ-ՍԻՐԻԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (Դեկտեմբեր 1992-Մարտ 2011)

Արթուր Իսրայէլեան
a.israyelyan@ysu.am

ՄՈՒՏՔ

Վերջին տասնամեակում Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) եւ Սիրիայի Արաբական Հանրապետութեան (ՍԱՀ) միջեւ արդիւնաւէտ համագործակցութեան դաշտ էր ձեւաւորուել, որն օրըստօրէ աւելի էր ընդլայնւում՝ բազմաթիւ նոր ոլորտներ ներգրաւելով: Հայ-սիրիական համագործակցութեան եւ յարաբերութիւնների զարգացման գործում անշուշտ իր անգնահատելի դեր է ունեցել Սիրիայի հայ համայնքը: Սակայն, տարածաշրջանում ընթացող զարգացումները մեծ վնաս հասցրեցին սիրիահայ համայնքին, որը եղել է մայր գաղթօճախ եւ տասնամեակներ շարունակ հայկականութեամբ է սնել սփիւռքի միւս գաղթօճախներին:

Սիրիահայ համայնքի ներկայ յարաբերաբար կազմալոյծ վիճակը, որը հետեւանք է երկրում ընթացող զինեալ, ընկերային, տնտեսական, անապահովական, քաղաքական տագնապներին, կարող է ունենալ ոչ-հայանպաստ ազդեցութիւն առնուազն երկու ոլորտներում. 1՝ ՀՀ-ՍԱՀ փոխյարաբերութիւնների, եւ 2՝ Սփիւռքի հայկական դիմագիծի եւ էութեան:

Սա Հայաստանի համար չափազանց զգայուն հարց է:

Միւս կողմից, եթէ խնդիրը դիտարկենք մարդասիրական տեսանկիւնից, ապա Ցեղասպանութիւնից 100 տարի անց Եղեռնը վերապրածների ժառանգորդների կեանքը եւս մէկ անգամ վտանգի է ենթարկւում: Իսկ եթէ հարցը դիտարկենք աշխարհաքաղաքական տեսանկիւնից, ապա հայ հայմայնքի կազմալուծմամբ ՀՀն զրկւում է Մերձաւոր Արեւելքում հայկական շահերը պաշտպանող կարեւոր մի կառոյցից եւ լծակից:

Մաղթենք, որ սիրիական տագնապը շուտ աւարտի եւ հայութիւնը՝ իբրեւ պետականութիւն եւ Սփիւռք վերականգնի իր յարաբերութիւնների տարբեր ոլորտները եւ խորացնի դրանք:

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ-ՍԻՐԻԱԿԱՆ ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻ ԿԱՊԵՐԻՆ

Հայ-սիրիական կապերն ունեն դարերի պատմութիւն: Հայաստանի ու Սիրիայի ներկայիս յարաբերութիւնների ջերմութիւնը մեծամասամբ պայմանաւորուած է երկու ժողովուրդների պատմական սերտ յարաբերութիւնների շարունակութեամբ: Սիրիայի եւ Հայաստանի միջեւ փոխյարաբերութիւնները աւելի գործառական բնոյթ ստացան Տիգրան

Մեծի կողմից Ասորիքը գրաւելուց յետոյ, իսկ առաջին տեղեկութիւնները հայ բնակչութեան գաղթի մասին դէպի Սիրիա վերաբերւում են Զ. դարին[1]: Ենթադրւում է, որ Անտիոքի լեռնային շրջաններում եւ Ճեպէլ Մուսայում բնակութիւն հաստատած հայութեան նախնիները այստեղ են հաստատուել հենց Տիգրան Մեծի ժամանակուանից[2]: Այդ յարաբերութիւնները ծաւալուել են պատմութեան զանազան հանգրուաններում՝ ըստ ժամանակահատուածի պատմաքաղաքական զարգացման:

Պատմական յարաբերութիւնների ընթացքում յատկապէս կարեւոր տեղ է զբաղեցնում 1915ի Հայոց Ցեղասպանութիւնը: Այդ ժամանակ սիրիացիները մեծ դեր խաղացին Տէր Զօրի անապատներում յայտնուած հայերի փրկութեան գործում: Յետագայում եւս Սիրիայում հանգրուանած մեծաթիւ հայկական համայնքը լայն աջակցութիւն ու օգնութիւն ստացաւ այդ երկրի կառավարութիւնից[3], միաժամանակ սատարելով երկրի տնտեսութեան, մշակոյթին, ժողովրդագրութեան յառաջդիմութեան եւ ընդհանրապէս բարգաւաճման: 1918ին սիրիահայութեան[4] թիւը կազմում էր շուրջ 142 հազար մարդ, որից մոտ 60 հազարը բնակւում էր Հալէպում: Ի. դարի կէսերին Հալէպի ու Դամասկոսի հայ համայնքների թուաքանակը հասաւ շուրջ 100 հազարի: Համայնքի թուաքանակի վերաբերեալ շրջանառւում են աւելի նուազ տուեալներ եւս՝ 50,000-80,000ի շրջանակներում[5]:

Ինչպէս նշեցինք՝ Սիրիա-Հայաստան յարաբերութիւնների զարգացման հիմքում ընկած է նաեւ սիրիահայ համայնքի դերը, որը երկրի զարգացման ու բարգաւաճման գործում մեծ ներդրում է ունեցել նաեւ՝ Սիրիայի հասարակական-քաղաքական կեանքում եւ մշտապէս ընդունուել ղեկավարութեան կողմից: Սիրիացիները գնահատել եւ գնահատում են հայերի ներկայութիւնն ու նրանց խաղաղասէր դերն իրենց երկրի ներքին կեանքում: Հայերը մասնակցել են Սիրիայի ազատութեան ու անկախութեան համար մղուած պայքարին, ինչի արդիւնքում 17 Ապրիլ 1946ին Սիրիան ձեռք բերեց անկախութիւն: Հայերի դրական ներկայութիւնը եւ դերակատարութիւնը շարունակւում են մինչ օրս:

Պէտք է հաստատել, որ հայ-սիրիական յարաբերութիւնները աւանդաբար եղել են բարեկամական ու գործընկերային: Խորհրդային տարիներին, հայ-սիրիական յարաբերութիւնները գտնւում էին բարձր մակարդակի վրայ. պատմական փաստ կարելի է համարել նախագահ Հաֆէզ ալ-Ասադի այցը Խորհրդային Հայաստան[6]:

Հաֆէզ ալ-Ասադի այցը Երեւան, 18 Հոկտեմբեր 1979

1991 Սեպտեմբերին Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, երբ ՀՀն հռչակեց իր անկախութիւնը, ՍԱՀը առաջիններից էր, որ նոյն թուականի Դեկտեմբերի 28ին պաշտօնապէս ճանաչեց ՀՀ անկախութիւնը: Դրանով սկիզբ դրուեցին երկու երկրների քաղաքական, մշակութային, տնտեսական, գիտական եւ այլ ոլորտների բազմակողմանի փոխյարաբերութիւնների զարգացման: 1992ից մեծ հեռանկար բացուեց այս փոխյարաբերութիւնների գործնական բնոյթի զարգացման:

ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Նորաստեղծ յարաբերութիւնները զարգացնելու նպատակով 5-6 Մարտ 1992ին ՀՀ արտգործնախարար Ռաֆֆի Յովհաննիսեանը պաշտօնական այցով մեկնեց Սիրիա, որտեղ հանդիպումներ ունեցաւ նախագահ Ասադի եւ արտգործնախարար Ֆարուկ ալ-Շարաայի հետ: 6 Մարտ 1992ին Դամասկոսում ՀՀ եւ ՍԱՀ ԱԳ նախարարները ստորագրեցին «Դիւանագիտական Յարաբերութիւններ Հաստատելու Մասին» հռչակագիրը[7]:

29 Մարտ 1992ին պաշտօնական այցով Երեւան այցելեց սիրիական 21 հոգանոց պատուիրակութիւնը՝ ԱԳ նախարար Ֆարուկ ալ-Շարաայի գլխաւորութեամբ: Այցն ուշագրաւ էր նաեւ այն առումով, որ Սիրիան իր պատրաստակամութիւնն էր յայտնում Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում միջնորդական առաքելութիւն իրականացնել[8]:

Ֆարուկ ալ-Շարաայի այցի ընթացքում ՀՀ եւ ՍԱՀ ԱԳ նախարարութիւնների միջեւ «Համագործակցութեան եւ Մշտական

Խորհրդակցութիւններ Անցկացնելու Մասին» արձանագրութիւն, «Առեւտրատնտեսական Համագործակցութեան Մասին» եւ «Մշակութային Համագործակցութեան Մասին» համաձայնագրեր ստորագրուեցին:

25 Ապրիլ 1992ին ՍԱՀ նախագահ Հաֆէզ ալ-Ասադի հրաւէրով ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած պատուիրակութիւնը եռօրեայ պաշտօնական այցով մեկնեց Սիրիա: Դա ՀՀ նախագահի առաջին այցն էր Մերձաւոր Արեւելք, որի ընթացքում հայկական պատուիրակութիւնը արտակարգ ջերմ ու բարեկամական ընդունելութեան արժանացաւ նախագահ Ասադի եւ սիրիացիների կողմից: ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցաւ ՍԱՀ նախագահի, արտգործնախարարի եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարների հետ: Հանդիպումների ընթացքում իթիւս երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի, քննարկուեց նաեւ արցախեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման ուղղութեամբ ՍԱՀի հնարաւոր աջակցութեան հարցը: Պայմանաւորուածութիւններ ձեռք բերուեցին նաեւ դեսպանութիւններ բացելու խնդրով:

1992 Յուլիսին, երկու երկրների միջեւ ստորագրուեց «Հիւպատոսական, Առեւտրատնտեսական եւ Գիտահետազօտական Համագործակցութեան Մասին» համաձայնագիրը, իսկ արդէն 1993 Փետրուարին Հալէպում բացուեց ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը եւ գլխաւոր հիւպատոս նշանակուեց Պօղոս Սարաջեանը (1992-94): Յետագայ տարիներին Հալէպում իբրեւ ՀՀ գլխաւոր հիւպատոսներ պաշտօնավարել են Լեւոն Սարգսեանը (1994-98), Արեգ Յովհաննիսեանը (1999-2002), Արմէն Մելքոնեանը (2002-05), Արթուր Մանասարեանը (2005-08), Աշոտ Մանուկեանը (2008-11), Կարէն Գրիգորեանը (2011-2014) եւ Տիգրան Գէորգեանը (2014-17): 2017 Սեպտեմբերից ՀՀ հիւպատոսն է Արմէն Սարգսեանը[9]:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի 2010ին Սիրիա կատարած պաշտօնական այցի շրջանակներում, որի մասին կը խօսենք ստորեւ, Սիրիայի արեւելեան նահանգներում ՀՀ պատուաւոր հիւպատոս նշանակուեց Սիրիայի քաղաքացի, հայազգի գործարար Սուրէն Վարդանեանը: Ներկայումս սրիրական ճգնաժամի պայմաններում պատուոյ հիւպատոսութեան գրասենեակը ժամանակաւորապէս չի գործում:

4 Ապրիլ 1993ին պաշտօնական այցով Սիրիա մեկնեց ՀՀ պատուիրակութիւնը՝ ԱԳ նախարար Վահան Փափազեանի գլխաւորութեամբ: Նա Հալէպի առաջնորդարանում հանդիպեց հայ համայնքի ներկայացուցիչների հետ եւ մասնակցեց ՀՀ դրօշի օծման եւ ՀՀ դեսպանութեան բացման հանդիսաւոր արարողութեան: 5 Ապրիլ 1993ին՝ Դամասկոսում բացուեցին ՀՀ, իսկ 6 Հոկտեմբեր 1998ին՝ Երեւանում ՍԱՀ դեսպանութիւնները: Դաւիթ Յովհաննիսեանը (1992-98) դարձաւ ՀՀ

գործերի հաւատարմատար, ում փոխարինեց դեսպան Լեւոն Սարգսեանը (1998-2003): 2003-07՝ ՀՀ ժամանակաւոր հաւատարմատարի կարգավիճակով պաշտօններ զբաղեցրեցին Եուրի Բաբախանեանը (2004-06), Կարէն Գրիգորեանը (2006) եւ Արտիոմ Ազնաուրեանը (2006-07): 2007 Հոկտեմբերից մինչ օրս Սիրիայում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպանն է Արշակ Փոլադեանը:

Երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւնները զարգացնելու նպատակով, Օգոստոս 1993ին Դամասկոսի 40րդ միջազգային տօնավաճառում Հայաստանը պաշտօնապէս մասնակցեց յատուկ տաղաւարով, որի բացումին առթիւ Դամասկոս ժամանեց ՀՀ Արդիւնաբերութեան նախարար Աշոտ Սաֆարեանի գլխաւորած պատուիրակութիւնը:

Կողմերը ջանքեր էին գործադրում աշխուժացնել նաեւ խորհրդարանական կապերը: 22 Դեկտեմբեր 1993ին ՀՀ գերագոյն խորհրդի նախագահ Բաբկէն Արարքցեանը պաշտօնական այցով մեկնեց ՍԱՀ: Այցի ընթացքում համաձայնագիր կնքուեց ՀՀ գերագոյն խորհրդի եւ ՍԱՀ ժողովրդական ժողովի (խորհրդարան) միջեւ:

Քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնների զարգացմանը զուգահեռ, կողմերը սկսեցին համագործակցել նաեւ կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի բնագաւառում: 4 Յուլիս 1994ին Երեւանում ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան եւ ՍԱՀ Բարձրագոյն Կրթութեան Նախարարութեան միջեւ գիտական համագործակցութեան մասին արձանագրութիւն ստորագրուեց: 17 Յունուար 1995ին պաշտօնական այցով ՍԱՀ մեկնեց ՀՀ կառավարութեան պատուիրակութիւնը ՀՀ Բարձրագոյն Կրթութեան եւ Գիտութեան նախարար Վարդգէս Գնունու գլխաւորութեամբ: Այցի շրջանակներում հաստատուեց «1995-1997 թթ. Մշակոյթի, Գիտութեան, Կրթութեան, Տեղեկատուութեան եւ Տուրիզմի Ոլորտներում Երկու Երկրների Համագործակցութեան» գործնական ծրագիր:

30 Ապրիլ 1995ին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատեանի գլխաւորած պատուիրակութիւնը պաշտօնական այցով մեկնեց ՍԱՀ: Այցի ընթացքում երկու կառավարութիւնների միջեւ «Տնտեսական եւ Գիտատեխնիկական Համագործակցութեան», «Եկամտահարկի եւ Դրամագլխի Նկատմամբ Կրկնակի Հարկումից Խուսափելու Մասին», «Ներքին Գործերի Նախարարութիւնների միջեւ Համագործակցութեան Մասին», «Օդային Հաղորդակցութեան Մասին» համաձայնագրեր ստորագրուեցին:

ՀՀ ԱԳՆ հրաւէրով քաղաքական խորհրդակցութիւններ անցկացնելու նպատակով 1995 Հոկտեմբերի 16-20ը պաշտօնական այցով Երեւան ժամանեց ՍԱՀ ԱԳՆ փոխնախարար Ռասլան Ալլուշը: Այցի

շրջանակներում ստորագրուեց «ՀՀ եւ ՍԱՀ Միջեւ Հիւպատոսական Համագործակցութեան Մասին» համաձայնագիր:

ՀՀ ԱԳ նախարարներ Ալեքսանդր Արզումանեանն ու Վարդան Օսկանեանը համապատասխանաբար 1997 Մարտին եւ 1998 Նոյեմբերին աշխատանքային այցով մեկնեցին Սիրիա: Այդ ընթացքում ՀՀ եւ ՍԱՀ կառավարութիւնների միջեւ կնքուեցին հետեւեալ համաձայնագրերը.-

- *ՀՀ Մշակոյթի, Երիտասարդութեան Հարցերի եւ Սպորտի Նախարարութեան եւ ՍԱՀ Սպորտի Գլխաւոր Վարչութեան Միջեւ Սպորտի Ասպարէզում 1996-97թթ. Համագործակցութեան Մասին.*
- *ՀՀ Արարատի Մարզի եւ ՍԱՀ Հալէպի Նահանգի Միջեւ Համագործակցութեան Մասին.*
- *ՀՀ Երեւան Քաղաքի եւ ՍԱՀ Դամասկոս Նահանգի Միջեւ Եղբայրացման Մասին.*
- *Հայաստանի Գրողների Միութեան եւ Արաբ Գրողների Միութեան Միջեւ Գրականութեան Բնագաւառում 1997-1998-1999թթ. Համագործակցութեան եւ Բարեկամութեան Մասին.*

Արձանագրութիւններից եւ յուշագրերից կարելի է առանձնացնել ստորեւ նշուածները.-

- *Քաղաքացիական Աւիացիայի Վարչութիւնների Միջեւ Փոխըմբռնման Արձանագրութիւն.*
- *Երկաթգծի Վարչութիւնների Միջեւ Արձանագրութիւն.*
- *Պաշտպանութեան Նախարարութիւնների Միջեւ Արձանագրութիւն.*
- *ՀՀ Արդիւնաբերողների եւ Գործարարների Միութեան եւ Դամասկոսի Արդիւնաբերական Պալատի Միջեւ Արձանագրութիւն.*
- *Մշակութային Համաձայնագրի Գործնական Ծրագրի 1996-97թթ. Մանրամասն Յուշագիր*:

Հայաստանի հետ միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն էր ուղղուած 2001 Յուլիսին ՍԱՀի ԺԺի նախագահ Աբդ էլ-Կադէր Կադդուրայի Երեւան կատարած պաշտօնական այցը: Յաջորդ տարի՝ 4 Մարտ 2002ին, քառօրեայ պաշտօնական այցով ՍԱՀ մեկնեց ՀՀ ԱԺ նախագահ Արմէն Խաչատրեանի գլխաւորած պատուիրակութիւնը:

Անդրադառնալով քաղաքական յարաբերութիւններին՝ նշենք, որ 1991-2000ի ընթացքում հայ եւ սիրիացի պաշտօնատարների հանդիպումների առանցքային թեմաներից մէկը եղել է արցախեան հակամարտութեան հարցը[10]:

Գործակցութեան այս թափը, սակայն, չունեցաւ իր տրամաբանական զարգացումը: Ընդհակառակը, սիրիական պատերազմին նախորդած շրջանում հայ-սիրիական յարաբերութիւններում նկատւում էր որոշակի *պասիւութիւն*, ինչը ակնյայտօրէն հետեւանք էր Սիրիայի եւ Թուրքիայի միջեւ հաստատուած ջերմ յարաբերութիւնների[11]:

Հնարաւոր *պասիւութեան* պատճառ կարող էին հանդիսանալ Սիրիայի հետ ցամաքային եւ տնտեսական կապերի բացակայութիւնը եւ անցագրային ռեժիմի երկկողմանի կիրառումը: Սակայն ՀՀ քաղաքականութիւնը այդ հարցում պայմանաւորուած էր ՀԱՊԿի[12] շրջանակներում կնքուած անվտանգութեան խնդիրներին առնչուող մի շարք պայմանագրերով եւ ուղղուած չէր ոչ մի պետութեան, առաւել եւս բարեկամ Սիրիայի դէմ:

Նկատենք, որ 2000ի նախագահական ընտրութիւնների արդիւնքում նախագահ ընտրուած Բաշար ալ-Ասադի պաշտօնավարման առաջին ժամանակաշրջանում հայ-սիրիական յարաբերութիւններում որոշակի անցանկալի դրսեւորումներ նկատուեցին: Հաւանաբար դա էր պատճառը, որ ՀՀ նախագահներից միայն Ռոբերտ Քոչարեանն իր կառավարման տարիներին պաշտօնական այցով չի եղել Սիրիայում[13]:

Ակնյայտ էր, որ վերջին տարիներին Սիրիայում այդքան էլ չէին խրախուսում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ յիշատակի միջոցառումների անցկացումը: Քաղաքական գնահատական տալիս չպէտք է անտեսել նաեւ այն հանգամանքը, որ Իսլամական Համագործակցութեան Կազմակերպութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցում ճնշումներ էր գործադրում Սիրիայի վրայ՝ նրա որդեգրած քիչ թէ շատ հաւասարակշռեալ դիրքորոշման համար: Ուստի 2002ին Սիրիան Հայաստանից ետ կանչեց դեսպան Համիդ Հասանին, որից յետոյ մինչ 2017 Սեպտեմբեր ամիսը ՀՀում ՍԱՀը ներկայացուած է միայն հաւատարմատարի մակարդակով: Նոյն քայլը կատարեց նաեւ ՀՀն 2004ին՝ ետ կանչելով դեսպան Լեւոն Սարգսեանին:

Այդուամենայնիւ արձանագրուեցին դրական քայլեր եւս: Ռազմական ոլորտում երկկողմ համագործակցութիւնը խթանելու նպատակով, 20-27 Օգոստոս 2001ին ՀՀ Պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի գլխաւորած պատուիրակութիւնը պաշտօնական այցով մեկնեց Սիրիա եւ աշխատանքային հանդիպում ունեցաւ ՍԱՀ Պաշտպանութեան նախարար Մուստաֆա Թլասի հետ: Այցի շրջանակներում Սարգսեանը հանդիպեց Սիրիայի ժողովրդական ժողովի նախագահ Աբդ էլ-Կադէր Կադդուրայի եւ վարչապետ Մուհամմադ Մուստաֆա Միրոյի հետ: Քննարկուեցին երկկողմ համագործակցութեան առնչուող խնդիրներ, կարեւորուեց երկու երկրների միջեւ ռազմատնտեսական բնագաւառում համագործակցութեան զարգացումը: Այցի ընթացքում երկու երկրների նախարարների կողմից ստորագրուեց «Հայաստանի Հանրապետութեան եւ Սիրիայի Արաբական Հանրապետութեան Կառավարութիւնների Միջեւ Ռազմատեխնիկական Ոլորտում Համագործակցութեան Մասին» համաձայնագիր:

Այս ամէնով հանդերձ ՀՀն, կարեւորելով ՍԱՀի հետ ջերմ յարաբերութիւններն ու պատմական անցեալը, խորապէս գնահատելով

ՍԱՀ իշխանութիւնների հոգատար վերաբերմունքը երկրի բազմահազար սիրիահայերի հանդէպ, որոնք օժտուած են երկրի քաղաքացիների համար սահմանուած իրաւունքներով, նախկին ջերմ յարաբերութիւնները վերականգնելու նպատակով կատարեց առաջին քայլը:

Հայ-սիրիական դիւանագիտական յարաբերութիւններին նոր շունչ հաղորդելու նպատակով ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը 8 Ապրիլի 2006ին պաշտօնական այցով մեկնեց Սիրիա: 2007 Հոկտեմբերին Դամասկոսում ՀՀ դեսպան նշանակուեց Արշակ Փոլադեանը:

Երկու ժողովուրդների մշակութային կապերը խորացնելու նպատակով 26 Նոյեմբերի 2008ին Դամասկոսում տեղի ունեցաւ «Հայաստանի Հանրապետութեան Մշակութային Օրեր»ի պաշտօնական բացման արարողութիւնը, իսկ 28 Յունիս 2009ից մինչեւ Յուլիսի 5ը Երեւանում եւ ՀՀ մի շարք մարզերում անցկացուեցին ՍԱՀ մշակոյթի օրեր:

26 Փետրուարի 2009ին ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանն աշխատանքային այցով մեկնեց Դամասկոս: Նոյն տարուայ Յունիսի 2ին ՍԱՀ ԱԳ նախարար Ուալիդ ալ-Մուալլիմն աշխատանքային այցով ժամանեց Երեւան: Ուալիդ ալ-Մուալիմի այցի հիմնական նպատակը Բաշար ալ-Ասադի պաշտօնական այցի կազմակերպումն էր:

17-19 Յունիս 2009ին երկօրեայ պաշտօնական այցով Հայաստան ժամանեց ՍԱՀ նախագահ Բաշար ալ-Ասադը[14]: Այցն իրօք կարելի է պատմական համարել, քանի որ ՀՀ անկախացումից իվեր Սիրիայից նման բարձրաստիճան այցելութիւն առաջին անգամ էր տեղի ունենում: Այցի ընթացքում երկու երկրների միջեւ ստորագրուեցին միջկառավարական եւ միջգերատեսչական փաստաթղթեր, որոնցից կարելի է առանձնացնել մարդասիրական, ներդրումների խրախուսման ու պաշտպանութեան մասին համաձայնագրերը:

Առեւտրատնտեսական յարաբերութիւններն ամրապնդելու նպատակով, 18 Յունիսի 2009ին ՀՀ եւ ՍԱՀ նախագահները ՀՀ կառավարութեան ընդունելութիւնների տանը մասնակցեցին հայ եւ սիրիացի գործարարների համաժողովի բացման արարողութեանը, ուր եւ պատասխանեցին ներկաներին յուզող հարցերին:

Այս հանդիպման ժամանակ իհարկէ շեշտը դրուեց տնտեսական յարաբերութիւնների խորացման գործում շատ մեծ դերակատարութիւն ունեցող ցամաքային հաղորդակցման ուղիների առկայութեան հարցին, որը այցի ընթացքում քննարկուած առանցքային կարեւորագոյն հարցերից էր: Պաշտօնական մակարդակով միջկառավարական յանձնաժողովների նախագահներին յանձնարարուեց մինչեւ նախագահների յաջորդ հանդիպումը ներկայացնեն թէ ի՞նչպիսի պայմանագրեր են կնքուելու եւ ի՞նչքանով է աւելացել երկրների միջեւ ապրանքաշրջանառութիւնը:

Այցի շրջանակներում նախագահ Ասադը այցելեց Էջմիածին եւ ջերմ ընդունելութեան արժանացաւ Ամենայն Հայոց կաթողիկոս ՆՍՕՏՏ Գարեգին Բ.ի կողմից[15]: Ի գնահատութիւն հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու հանդէպ ՍԱՀ նախագահի, պետութեան եւ ժողովրդի հոգատար եւ ազնիւ վերաբերմունքի, ինչպէս նաեւ ի խնդիր խաղաղութեան եւ ժողովուրդների բարեկամութեան կատարած իր աշխատանքի՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը նախագահ Ասադին յանձնեց Հայ Առաքելական Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձրագոյն շքանշանը[16]:

ՀՀ-ՍԱՀ դիւանագիտական յարաբերութիւններին նոր շունչ հաղորդեց 22 Մարտի 2010ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի՝ Սիրիա կատարած եռօրեայ պաշտօնական այցը, որի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցաւ նախագահ Ասադի, ԺԺ նախագահ Մահմուդ ալ-Աբրաշի եւ վարչապետ Մուհամմադ Նաջի Օտրիի հետ: Քննարկուեցին հայ-սիրիական տնտեսական կապերի ընդլայնմանն առնչուող հարցեր: Պաշտօնական այցի շրջանակներում նախագահին այցելեց նաեւ Հալէպ եւ Տէր Զօր քաղաքներ:

Սիրիայի հետ միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն էր ուղղուած 2010ի Նոյեմբերի 22-24ը ՀՀ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանի եռօրեայ պաշտօնական այցը ՍԱՀ: Յաջորդ տարի՝ 21-24 Մարտ 2011ին, քառօրեայ պաշտօնական այցով ՀՀ ժամանեց ՍԱՀ ԺԺ նախագահ Մահմուդ Աբրաշի գլխաւորած պատուիրակութիւնը:

Եթէ իմի բերենք ՀՀ եւ ՍԱՀ միջեւ իրաւապայմանագրային դաշտը, ապա պէտք է ասել, որ երկու երկրների միջեւ 1992-2011ին կնքուել է երեք տասնեակ համաձայնագիր, երկու տասնեակից աւել արձանագրութիւն եւ յուշագիր, ձեռք են բերուել բազմաթիւ պայմանաւորուածութիւններ: Այցելութիւնների մասով պէտք է ասել, որ ՀՀից եղել է մեկ տասնեակից աւելի պաշտօնական եւ պետական այցելութիւն, իսկ ՍԱՀից՝ մօտ մէկ տասնեակ:

Ամփոփելով հայ-սիրիական քաղաքական եւ դիւանագիտական յարաբերութիւնների ընթացքը, այն կարող ենք բաժանել 3 հանգրուանի.-

1) 1992-2000, երբ ձեւաւորուեցին միջպետական յարաբերութիւնները եւ կարելի է ասել հասան իրենց զարգացման ամէնաբարձր մակարդակին.
2) 2000-2007, երկողմանի յարաբերութիւնների «սառնութեան» փուլ, երբ դիւանագիտական յարաբերութիւնները դեսպանական մակարդակից իջեցուեցին աւելի ցածր մակարդակի.
3) 2007-2011, երբ ՍԱՀում ՀՀ նոր դեսպանի նշանակումով եւ երկու երկրների նախագահների պաշտօնական փոխայցելութիւններով էլ նոր շունչ հաղորդուեց յարաբերութիւններին:

Հայ-սիրիական յարաբերութիւններում անկիւնաքարային նշանակութիւն ունեցաւ 2015 Ապրիլին Երեւանում Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցի միջոցառումներին սիրիական բարձր մակարդակի պատուիրակութեան մասնակցութիւնը՝ Սիրիայի ԺԺ նախագահ Մոհամմադ Ջիհադ ալ-Լահամի գլխաւորութեամբ, ինչը անշուշտ պէտք է դիտել հայ ժողովրդի հետ սիրիացի ժողովրդի համերաշխութեան դրսեւորում[17]: Այդ մասնակցութիւնը անշուշտ տուեց իր ցանկալի պտուղները, երբ սկիզբ դրուեց յարաբերութիւնների նոր փուլին՝ 2011-17, երբ 6 Սեպտեմբերի 2017ին ՀՀ նախագահ Սարգսեանին իր հաւատարմագրերը յանձնեց ՀՀում ՍԱՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Մուհամմադ Ահմադ Հաջ Իբրահիմը[18]: Հայ-սիրական յարաբերութիւնների նոր փուլի՝ 2011-17, մասին ապագայում հանդէս կը գանք նոր յօդուածով:

Վստահաբար կարող ենք ասել, որ սիրիական ճգնաժամի հենց սկզբից էլ ՀՀ իշխանութիւնը խորապէս մտահոգուած է եղել Սիրիայի բարեկամ ժողովրդի ճակատագրով՝ այս ամբողջ ընթացքում ցաւով հետեւել է իրադարձութիւններին եւ մարդկային իրավիճակի վատթարացմանն ու իր հնարաւորութիւնների սահմաններում աջակցութիւն է ցուցաբերել ինչպէս սիրիահայ համայնքին, այնպէս էլ սիրիացի ողջ ժողովրդին:

Այսօր էլ, սիրիական խորը ճգնաժամի պայմաններում երկու երկրները շարունակում են ամրապնդել եւ զարգացնել երկկողմ յարաբերութիւնները՝ յանուն հայ եւ սիրիացի ժողովուրդների բարգաւաճման եւ հզօրացման:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Աշոտ Աբրահամեան, *Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան, Հտր. 1*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 428-9:

[2] Նոյն, էջ 428:

[3] Ալ-Ասադների ժամանակաշրջանում հայ համայնքի մասին տե՛ս՝ Արաքս Փաշայեան, Լիլիթ Յարութիւնեան, *Սիրիայի Հայ Համայնքը. Արդի Հիմնախնդիրներ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտ, 2011, էջ 24-33:

[4] Այստեղ Սիրիան պէտք է հասկանալ դեռեւս չգոյացած պետութիւն, իբրեւ աշխարհագրական տարածք, որի մէջ մտնում էր նաեւ ժամանակակից Լիբանանը:

[5] Փաշայեան, Յարութիւնեան, էջ 13:

[6] Նոյն, էջ 26:

7 http://www.mfa.am/hy/country-by-country/sy/ :

[8] Ֆարուք ալ-Շարաան համաձայնագրերի ստորագրման հանդիսաւոր արարողութիւնից յետոյ հաւաստեց արցախեան հակամարտութեան խնդրում Սիրիայի անկողմնակալ չէզոքութիւնը եւ հերքեց ադրբեջանական մամուլի այն պնդումները, թէ Սիրիան այդ հակամարտութեան ընթացքում օգնում է Հայաստանին (*Երկիր Օրաթերթ*, 31 Մարտ 1992, էջ 2):

9 Հալէպում եւ Դամասկոսում 1992-2010՝ պաշտօնավարած հայ դիւանագէտների մեծ մասը սովորել է ԵՊՀ Արեւելագիտութեան Ֆակուլտէտի Արաբական Բաժնում: Նրանցից որոշները այժմ էլ դասախօսում են ԵՊՀում, հեղինակներ են բազմաթիւ գիտական աշխատութիւնների:

10 ՍԱՀի կողմից ՀՀի նկատմամբ ջերմ յարաբերութիւնների մասին խօսելիս կարելի է անդրադարձ կատարել նախագահ Հաֆէզ ալ-Ասադի կողմից 1997 Դեկտեմբերին Իրանում կայացած Իսլամական Համագումար Կազմակերպութեան հերթական գագաթաժողովի ժամանակ հնչեցրած մտքին. «*Հազիւ թէ Սիրիան բացայայտօրէն հանդէս գար Ադրբեջանի պաշտպանութեամբ, որը կողմնորոշուած է դէպի Թուրքիա: Սիրիային մտահոգում են տարածաշրջանում գերտէրութիւն դառնալու Թուրքիայի յաւակնութիւնները: Բացի այդ, Սիրիան ջերմ եւ բազմակողմ յարաբերութիւններ է հաստատել Հայաստանի հետ*» (Ա. Փաշայեան, *Իսլամական Կոնֆերանս Կազմակերպութիւնը. Նպատակները, Գործունէութիւնը, Դիրքորոշումը Ղարաբաղեան Հակամարտութեան Նկատմամբ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտ, 2003, էջ 203):

11 http://www.bbc.com/arabic/middleeast/2016/07/160713_timeline_turkey_syria_relations

12 Խօսքը գնում է Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան մասին:

13 Յունիս 2000ին նախագահ Քոչարեանը մեկնել է Սիրիա՝ մասնակցելու նախագահ Հաֆէզ ալ-Ասադի յուղարկաւորման արարողութեանը:

14 http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2009/06/17/news-29/ :

15 Հայոց Հայրապետը վերյիշել է իր այցելությունը ՍԱՀ՝ Հալէպ եւ Տէր Զօր, եւ հաստատել Սիրիայի ժողովրդի հիւրընկալ ոգին եւ իշխանութիւնների հոգատար վերաբերմունքը սիրիաբնակ հայորդիների նկատմամբ՝ յաւելելով, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ Սիրիայի եղբայր ժողովրդի աջակցութիւնը, որ ցուցաբերուեց Մեծ Եղեռնից մազապուրծ հազարաւոր հայերի: Հայոց Հայրապետը նաեւ խօսել է միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւնների մասին՝ աշխարհի առաջ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում կարեւոր նկատելով հոգեւոր առաջնորդների համերաշխ համագործակցութիւնը ի սէր ժողովուրդների բարօրութեան: Հայրապետը գոհունակութեամբ անդրադարձել է այդ շրջագծում տեղի ունեցած Ասորի Ուղղափառ եկեղեցու պետ Զաքքա Ա. Պատրիարքի եւ ՍԱՀ գլխաւոր Մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունայի այցերին Մայր Աթոռ:

16 http://echmiadzin.asj-oa.am/4665/ :

17 Սիրիայի խորհրդարանի նախագահը կարեւորել է 2015 Ապրիլին՝ Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած պետական միջոցառումների շրջանակներում Երեւան կատարած իր պաշտօնական այցը՝ ընդգծելով այդ միջոցառումների քաղաքական մեծ նշանակութիւնը Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման հարցում:

[18] http://www.president.am/hy/press-release/item/2017/09/06/President-SerzhSargsyan-received-the-credentials-of-the-Syrian-Ambassador/ :

The State Relations of Armenia and Syria (1992-2008)

(Summary)

Arthur Israelian
a.israyelyan@ysu.am

Syria is a powerful member of the Arab League, member of the Islamic Cooperation Organization and member of Club of 77. The country also has a strategic location on the Mediterranean and is an important junction on the economic transit highway between the Indian Ocean and Black Sea.

Armenian-Syrian relations have traditionally been friendly and cooperative since the days of the Soviet Union when, in 1979, President Hafez Assad paid a visit to Soviet Armenia on his way back from a visit to Moscow. The current Syrian-Armenian community was formed due to the Armenian Genocide of 1915. Decades after the settlement of the refugees, the Armenians have turned into one of the most law-abiding communities of Syria and have contributed immensely to the growth of the Syrian economy.

Syria was among the first to recognize the independence of the Republic of Armenia. Soon warm relations were established in the political, cultural, economic and scientific spheres, which gradually developed and deepened. Currently these relations are being further strengthened.

The paper highlights the two basic tracks of these relations: a) Armenian-Syrian diplomatic relations between 1991 and 2008 and their development and extent, b) Agreements and Memorandums of Understanding signed between the two countries.